

Ա. Ա. Լալայան

## ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՎԱԾ ՄԻ ՏՊԱԳԻՐ ԲԺՇԿԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1843 թվականին, Թիֆլիսում ուսանողներից հայերեն է թարգմանվել և հրատարակվել մի բժշկարան: Այս բժշկարանի լրիվ խորագիրն է «Առ ձեռն բժշկարան ի պետս գյուղականաց կամ բժշկական խրատք վասն արքունի գյուղականաց»: Տիտղոսաթերթի վրա գրված է նաև բնագրի խորագիրը ուսերեն լեզվով «Сельский домашний лечебник или врачебные наставления для государственных крестьян», գրանից անմիջապես հետո նշված է «Перевод с русского». Գիրքը հրատարակել է «Գյուղական և մանուֆակտուրային արդյունաբերությունը և առևտրին փաշալերոզ Անդրկովկասյան ընկերությունը» («Закавказское общество поощрения сельской и мануфактурной промышленности и торговли»): Թարգմանությունը կատարել է նույն ընկերության անդամ Հ. Արզանյանցը, տպագրվել է Հ. և Դ. Արզանյանցների տպարանում:

Թարգմանությունը, ամենայն հավանականությամբ, կատարված է բժշկարանի Պետերբուրգի 1841 թ. ուսանող հրատարակությունից: Բնագիրը բաղկացած է 2 մասից: Առաջին մասը վերաբերվում է մարդկանց հիվանդություններին, իսկ երկրորդը՝ տնային կենդանիների հիվանդություններին: Հայերեն թարգմանված է միայն առաջին մասը՝ «կանոններ մարդկանց հիվանդությունների բուժման վերաբերյալ»:

Վերոնշյալ գիրքը թարգմանական բժշկական գրականության մեջ մինչև այժմ մնացել է անհայտ:

Թբիլիսիում Կարլ Մարքսի անվան Պետական Հանրային գրադարանում գտնվում է այդ բժշկարանի թարգմանության մեկ օրինակը:

75 էջից բաղկացած այս բժշկարանը պարունակում է 5 գլուխ և «Խրատք» վերնագիրը կրող բաժինը, զետեղված գրքի վերջում:

Առաջին գլուխը կրում է «Հասարակ հիվանդությունք և խրատք բժշկելու» վերնագիրը և ունի 9 ենթագլուխներ՝ «Գլխացավ», «Աչքացավություն», «Փոքրացավ կամ սրկորացավ», «Հազ», «Որովայնացավություն», «Ողնացավ կամ մեջքացավ», «Ջարգվածք կամ հարվածք», «Խոց կամ վերք», «Փոշտանկություն կամ աղեթափություն»:

Երկրորդ գլխի վերնագիրն է «Հաղադս ծավալական և փոխադրական կամ տարափոխիկ ցավոցն և հաղադս խնամատարությունց և զեղորեից նոցա ընդհանրապես»: Այս գլխի ենթագլուխներից մեկը նվիրված է վարակիչ հիվանդությունների դեպքում ձեռք առնվելիք ընդհանուր միջոցառումներին և շոշափում է մեծ մասամբ պրոֆիլակտիկ բնույթի խնդիրները:

«Հաղադս ծավալական և փոխադրական կամ տարափոխիկ ախտից ի մասնավորի» — այսպիսին է երրորդ գլխի վերնագիրը: Այստեղ տրված են



մի շարք հիվանդութիւններ ժամանակ ձեռք առնվելիք միջոցառումները և որոշ գեպքերում էլ հիվանդութեան նշանները:

Բժշկարանի չորրորդ գլխում, որի վերնագիրն է «Դի արվածք որս հարկավոր է շուտափութի մատակարարութեան», խոսվում է կատաղած կենդանիների պատճառած վերքերից առաջացած թունաւորման կասկածի, այրվածքների և ցրտահարութեան գեպքերում ձեռք առնվելիք միջոցառումների մասին:

Հինգերորդ գլուխը կրում է «Դի արվածք սուտ և կարծիքական մահուց կամ սուտ մեռելութեան և խրատք դարձուցանելու վեհանս» և ամփոփում է ջրահեղձութեան, ապականված օդից անշնչանալու, կայծակահարութեան և մի շարք այլ պատճառներից առաջացած ուշագնացութեան, ինչպէս նաև ուշագնաց վիճակում ծնված երեխային օգնութեան ցույց տալու միջոցները:

Բժշկարանի վերջին «Խրատք» վերնագիրը կրող բաժինը ցուցմունքներ է երակահատին, որը պետք է բժշկական օգնութեան ցույց տա այն տեղում՝ ուր բժիշկ չկա: Նկարագրվում են այն գեպքերը, երբ երակահատը պետք է արյուն առնի երակից կամ տգրուկ դնի, նշվում է նաև վերջնական արյան քանակը, ըստ օրգանիզմի ամբողջական և չափահասութեան:

Արժեքավոր է խրատների այն մասը, որը վերաբերվում է արյունահոսութեանը կանգնեցնելուն: Ապա ցուցմունքներ են տրվում «չոպաններ քանալու», «խախտեալ մասը մարմնի ուղղելու կամ կապելու», «փոշտանկութեան կամ աղեթափութեան» ցույց տրվելիք բուժական օգնութեան մասին:

Հետաքրքրական է «Մատակարարութեանը ներքին ցավոց» ենթագլուխը, ուր խրատներ են տրվում «ամենայն տեսակի թուլական տենդերի ժամանակ ձեռք առնվելիք միջոցառումների մասին», «տանձին-առանձին նշելով տենդի տեսակը և բուժական միջոցները: Երակահատներին խորհուրդ է տրվում զանազան հիվանդութեանների ժամանակ համապատասխան գեղորայք օգտագործելու վերաբերյալ: Նշված խնդիրներին են վերաբերվում բժշկարանի «Խրատք» բաժնի «Ծավալական ախտից գեղորայք» և «Փոխադրական կամ տարափոխիկ ցավոց գեղորայք» ենթագլուխները:

Դեղանյութերից թունաւորման գեպքում բժշկական օգնութեանն է նվիրված այս բժշկարանի վերջին մասը՝ 73—75 էջերը: Բերվում է «Ջհամառոտ ցուցակ գլխավորագոյն մահադեղից և նոցուց սպանիչ դեղթափից»: Այստեղ տրված է արսենի, սուլեմայի, պղնձի և նրա աղերի, արճճի, թթուների և այլնից, ինչպէս նաև թունաւոր սնկերից և սպանական ճանճերի ու օձի խայթոցի գեպքում առաջացած թունաւորումների ժամանակ ձեռք առնվելիք միջոցառումները:

Բժշկարանի առաջին հինգ գլուխները նախատեսված են եղել ժողովրդական խավերի համար և ըստ այդմ էլ ավելի մատչելի են իրենց բուժականութեամբ, քան բժշկարանի «Խրատք» վերնագիրը կրող բաժինը, որը նախատեսված է եղել երակահատների համար, հաշվի առնելով վերջիններիս ունեցած որոշ հմտութիւնը բժշկական օգնութեան խնդիրներում:

Բժշկարանի «Խրատք» բաժինը հնարավորութեան է ստեղծում երակահատներին իրենց ձեռքի տակ գործունեութեան գիտական ուղեցույց ունենալ: Բժշկարանում մի շարք անգամ դատապարտվում և փնտաւար է հա-

մարվում հեքիմների գործունեությունը և այդ շրջանում բուժական նպատակներով կիրառվող մի քանի վտանգավոր սովորություններ, Այսպես օրինակ «Գաղիական ախտի» մասին ասված է.

«Ախտացյալն մի ձեռնամուխ լիցի ի բժշկել զինքն և մի վարեսցի խորհրդովք բժիշկ անուանեալ կանանց, որք ըստ մեծի մասին հրամայեն ձխել զհիվանդն լոխմայովք, որմե հառաջանայ, գոգումն գլխոյ և ամենայն մասանց մարմնո» (էջ 35):

Ի հակադրություն հիվանդությունների տարածման վերաբերյալ հին և խիստ միազմատիկ տեսություն, որը այդ շրջանում շատ ընդունված էր, բժշկարանում տարափոխիկ հիվանդությունները որակվում են իբրև շրիման-կոնտակտի արդյունք. «...փոխադրականք կամ տարափոխիկ են, որք փոխադրին կամ տարափոխին ի միովն միայնոյ լով ի յարակցութենե ընդ նմա» (էջ 24):

Հիվանդությունների տարածման կոնտակտային թեորիան ջերմ կերպով պաշտպանել և զարգացրել են ժամանակի առաջավոր գիտնականները, ուստի աղանդավոր բժիշկներ Դանիլո Սամոյլովիչը, Մուդրովը և ուրիշները, որոնց ազդեցությունը ակնհայտ է բժշկարանի այս մասում: Այս և նման փաստերը իրավունք են տալիս ասելու, որ բժշկարանը կազմված է իր ժամանակի առաջավոր բժշկության պահանջների համեմատ:

Այս գիրքը ուսուերենից հայերեն թարգմանված մեզ հայտնի առաջին տպագիր բժշկարաններից մեկն է, որը իր ժամանակին, անշուշտ, որոշ գեր է խաղացել հայերի մեջ բժշկական գիտելիքների տարածման գործում և ամենայն հավանականությամբ հանգիստացել է հայ ժողովրդական առաջավոր բժիշկների գործունեության ուղեցույցներից մեկը:

А. А. Лалаян

## Об одном печатном лечебнике, переведенном с русского на армянский язык

### Р е з ю м е

В 1843 году был переведен с русского на армянский язык и издан в г. Тбилиси небольшой труд под заглавием „Сельский домашний лечебник или врачебные наставления для государственных крестьян“. Перевод лечебника сделан Арзаянцом, по всей вероятности, по русскому изданию 1841 года.

Оригинал вышеупомянутого лечебника состоит из двух частей, из которых в первой содержатся правила о лечении болезней людей, а во второй—правила о сбережении и лечении домашнего скота. На армянский язык переведена только первая часть этого лечебника.

О вышеозначенном переводе в литературе до сего времени не было сообщено никаких сведений. В Тбилисской публичной библиотеке имени К. Маркса находится экземпляр этого перевода. Труд этот являлся одним из первых известных нам печатных лечебников, переведенных с русского на армянский язык. В свое время лечебник этот

несомненно должен был сыграть некоторую роль в деле распространения медицинских знаний среди армянского населения; по всей вероятности, он являлся также чем-то вроде справочника для народных врачей, в руках которых в значительной степени находилось дело подачи медицинской помощи в бывшей Армянской области.